

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍՎԻՍԱՄԱԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, Թ.Ի.Ի 2.

1 Մայիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱՐԱՆ

ՃԻՎԷԼԷԿԵԱՆ

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



1. *ՍՐԲՈՅՆ ԱԹԱՆԱԳԻՆԵՍՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎՐԱՅ* Կարենոր դիտողութիւնը ազգային տեսակետով . (Շալալարութիւն) : — Սահակ Ծ. Վ. Հահեռն :
2. *ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻՉ, ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ* . (Առաջին վեցամսեայ քննութիւնը) : — Ա. Թ.
3. *ՊԱՅՔԱՐ ԱԶԱՆՑ ՅԱԻՍՏՐԻԱ—ՈՒՆԿԱՐԻԱ* . — (Շալալարութիւն եւ վերջ) . Հ. Մէրոյ Ծ. Վ. Ծալկէան :
4. *ՀԱՆԴԷՍ ՕԾՄԱՆ ԵԿԵՂԵՏԻՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ Ի ՊԱՐՏԻԶԱԿ* . — Ն. Վ. Մ. Ա.

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 2

1 Մայիս 1894

ՍՐԲՈՅՆ ԱԹԱՆԱԳԻՆՆԱՅ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՎՐԱՅ

ԿԱՐԵՒՈՐ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍԱԿԵՏՈՎ(*)

(Շարայարութիւն)

Անահտական գաւառի նախկին ընակիչք ի սկզբանէ հետէ նշանաւոր էին ջերմ զիցամուլութեամբ եւ իրենց երկիրը Անահտայ պաշտօնին նուիրած էին, զոր Աստղիկ լերան գլուխը կը պաշտէին փառաւոր մեհենաւ, հուշակաւոր յոյժ ի հնումն, որոյ հետք ցայսօր կ'երեւնան. բազմամուտ Խնճիճեանի վկայութեան համեմատ երեք երեւելի մեհեան կայր այն կողմերը Անահտայ նուիրեալ, մին ի Կոմանա՝ ութ ժամ հեռի Աստղիկ լեռնէն ընդ հիւսիս, մին ի Զելա, եւ միւսն սոյն Աստղիկ լերան կաւարը :

Քրիստոնէական հաւատքը քարոզեցաւ անդանօր նոյն իսկ առաքեալներէն եւ նոցին յաջորդներէն : Երկրորդ գարունը ըսկիզբները կը տեսնենք որ Քրիստոնէական կրօնքը ընդհանուր տարածուած է Անահտական գաւառին մէջ : Այն որ զիցամուլութեամբ նշանաւոր էր, ճշմարիտ ատուածապաշտութեան մէջ եւս վաղ ընդ փոյթ յառաջընթաց հանդիսանալով երեւելի եւ նախանձեղի եղաւ, նման բարի եւ պարարտ երկրի՝ Բանին կենաց

(*) Տե՛ս Պատկեր Ա. Տարի, էջ 560 :

սերմը յինքն ընդունելով հարիւրապատիկ արդասեօք ընծայեց
Նկեզեցւոյ մեծ բազմութիւն մը Գրիստոսի քաջապաղթ վը-
կայից , առաքելաչնոր՝ Հայրապետաց , եւն : Գլխաւոր Ա-
ռաքելոցն Պետրոսի եւ Պօղոսի եւ Թաղէոսի ատուա-
ծային վարդապետութենէն զատ , ի նոցանէ՝ եւ հաւանա-
կանագոյնս Հեթանոսաց Առաքեալէն կարգուեցաւ առաջին Ն-
պիսկոպոս Սեբաստիոյ՝ ըստ կարծեաց ոմանց՝ Ռնտիփորոս Նփե-
սացին , Պօղոսի աշակերտն եւ բարերարը , որոյ գովութիւնը ի
Նոր կաակարանի սնդ է , եւ որ առաջին նահատակը եղաւ վը-
կայեալ առ Անտիօքոս զատաւորաւն Սեբաստիոյ : Չկայ կարծեմ
երկիր մը ի հնումն սնդ այնչափ մարտիրոսներով հայրապետօք
եւ անապատակեաց ճգնաւորներով ճոխայեալ ինչպէս Սեբաս-
տիա՝ որոյ հողը արեամբ վկայից ուսուեալ է , կ'ըսուի :

Մեր նախնի հաւատարիմ պատմութիւնը կը վկայէ եւ ա-
մենայն ազգաց վկայաբանութիւնը կը հաստատուն թէ երկրորդ
եւ երրորդ դարերուն մէջ Սեբաստացւոց եւ անոր յարակից
Կեսարացւոց երկիրը ամբողջովին քրիստոնէադաւան եւ կրօնի
ջերմ պաշտօնատար ըլլալնուն պատճառաւ , զիցամու կայսերք
Հռովմայ իրենց բռնութիւնը աւելի անդանօր կը գործածէին ,
անողոր զատաւորներ եւ զօրաց զուեղեր խաւրելով այն կող-
մերը , եւ չէին կրնար նուաճել նոցա քաջապիրտ աննկուն ա-
րիւթիւնը : Ուխտանեսի եւ Մեծին Վարդանայ պատմութեան
բանից կարգերէն կը հասկցուի թէ մինչեւ վիսու զօրութեամբ
անգամ համարձակեր են պաշտպանել զսուրբ կրօնս ընդդէմ
բռնութեան Մաքսնտեայ կոոյ՝ որ ջերմ պաշտօնատար ,
տեղացի քրիստոնէից զէմ յարուցած կրկին պատերազմ-
ներուն մէջ չարաչար յաղթուեցաւ ըստ վկայութեան Նե-
սիբեայ : Յանկալի էր ինձ եւ գուցէ հաւանական այրպի-
սի կրկին փառաւոր յաղթանակաց պատիւը Կեսարիոյ եւ
Սերաստիոյ , եւ որ նոյն է Կապադովիոյ քրիստոսադօր
զօրտւարացն եւ զօրաց ընծայել , Մերկիոսիսի , Սարգսի , կրլ-
կին Թէոդորոսացն , Նւտրատիոսեանց , Սեւերիանոսի , Գա-
ւատուն մանկանցն Սերաստիոյ եւ Նիկոպօլոսոյ , յենով յայս
հաւանականութիւն թէ անչուշտ Ազաթանգեղոս եւ Քերթողա-
հայրն մեր մեծապանծ բռնիւք կը պտտմէին այրպիսի չքնաղ
գէպը մը , եթէ ինչպէս այժմ կը կարծուի՝ Մեծն Տրդատ ըրած
ըլլար այդ յաղթանակը , որ զանխուլ է յերկրցունցն եւ յամե-
նայն պատմապոյրաց Ազգիս :

Իսկ ըստ մասին պայծառութեան կրօնից՝ ինչպէս յայտնի
և և անուրանալի է տոճմային և օտար պատմիչներէ , այն բազմ-
մաթիւ Սեբաստիոյ առաքելաշնորհ Հայրապետք աստուածա-
տունկ զարդարեալ զբախտի նման մշակեալ և տոնմականօք
ուռճացուցեալ էին Սեբաստիոյ գաւառը , յորս երեւելի են Ու-
նիսիսորոս , Միհրուժան՝ որ Կղեմէս Աղեքսանդրացունց գրեց
ժամն ուրացելոցն և և վերտին զարձելոց , ինչպէս նաեւ Վլա-
սիոս , և մեծին Բարսղի եղբայրը , մերս այս Աթմնազինէս , Հը-
ուուփանոս , Մելիտոս հայրապետ և այլք . այս աստուածարեալ
հայրապետք չէն և անչէն վայրերը , խորածոր և ապառաժուտ
լեռները զարդարած էին անթիւ բազմութեամբ սրբակեաց և
քրիստոսասէր միախաղկեաց և ճգնաւորաց՝ յօրինակ բարի հա-
ւատացելոց և ի հողերուդի վարդապետութեան բանին կենաց ,
Խորնեցի Քերթողահօր այն խօսքը՝ զոր Պարթեւազին Գրիգորի
համար կ'ըսէ թէ « Վամնորոյ և ոչ նա յամնաց ի Կեսարիա ,
այլ փութապէս զարձեալ ի Սեբաստացւոց քաղաքին անսայր
հաւաքել զնիւթ վարդապետութեան իւրոյ հօտին . (Տէր Վեհէք.
32) » . և թէ կ'ըսեմ այսպիսի գեղեցիկ վկայութիւն մը Կուլթչմի-
տի հայրենեաց վրայ ըսուած ըլլար , Սեբաստիոյ իրրեւ աղբիւր
և խանձարուք լինելը լուսաւորութեան Աղգիս և համայն Հիւ-
սիսականաց աշխարհաբարոզ կը հռչակէր անշուշտ : Ինչպէս որ
ինձ և և Քերթողահօր այդ խօսքին և Ազաթանգեղեաց միւտ
այլ նման վկայութեան յենդով , զոր Լուսաւորչի համար կ'ըսէ ,
յետ ձեռնադրութեան 'ի Ս. Ղեւոնդեաց թէ՛ « Գային հասանէին ի
քաղաքն Սեբաստացւոց , և անդ յեցեալ յերեկօթ աւուրս ոչ
տակաւս : Եւ գտանէր բազմութիւն եղբարց՝ զորս հաւանեցու-
ցանէր ընդ իւր դալ , զի վիճակեցուցէ զնոսս ի քահանայու-
թիւն իւրում աշխարհին . և բազում գունդս զունդս յա-
ճախեալ առնոյր ընդ իւր , և մեծարանօք մեծարեալ յեպիսկո-
պոսաց աշխարհին և յիշխանաց և ի ժողովրդոց . (Ագաթ. էջ 605) » .
ախորժելի է համարել , թէ որպէս Պօղոսն առ ոսս Գամաղիէ-
լի , նոյն օրինակ և մեր հողոց լուսատուն Աթմնազինե-
այ աշակերտեալ իւր երկնապարզեւ իմաստութեամբ , վարուց
անմեղութեամբ , առաքելական փութով այնչափ սիրելի եղաւ
ի Քրիստոս դաստիարակին , մինչեւ իւր սրբասէր քոյրը զՄա-
րիամ հարմանացոյց նմա , որ որդւովք բերկրեալ և արժանա-
ւոր նախամայր եղաւ օրհնեալ շառաւիղի որդւոց և թոռանց
Լուսաւորչին :

Սոյն ենթադրութեանս համար կարծեմ թէ սչ ոք կ'ստղը-տանէ զիս իբրև զառանցեալ առ հայրենասիրութեան : Այն պատիւը՝ զոր սպա ըրաւ Լուսաւորիչ իւր երանեալ աներոջ որդւոյն սուրբ սակերաց , ընդ նշխարաց սրբոյ Կարապետին հայցելով եւ ընդունելով ի Գեւորնդիոսէ , եւ բերելով յիւր վիճակն իբրև գանձ անդին , եւ Սուաբերոյ ու Մասնեվարնի նման փառաւոր եկեղեցեօք՝ վսնորէիւք պատուելով , հանդերձ կրկին տօնախմբութեամբք յանուն նորա ի սարւոջ , մի ընդ սրբոյ Կարապետին , որպէս աջակից պաշտպան երկրին , եւ միւս առանձինն , չեմ կարծեր թէ սոսկ մարմնական ազգակցութեան պարտոց լրման համար ըլլայ , այլ իբրև թէ իւր ուսուցիչ եւ Հոգեւոր ծնողին յիշատակը իւր Վիճակին եւ Հօտին մէջ անջինջ պահպանելու համար էր :

Սասցերոցս անհերքելի սպացոյց եւ ոչ սակաւ ուշադրաւ է Սպաթանգեղեաց վրայութիւնը զոր ի վեր անդր յիշեցինք , յորում գտանէր բազմութիւն եղբարց եւ բազում գունդս գունդս յաճախեալ անոցր ընդ իւր կրկնելով (կամ ըստ արդեան ընդուր շեշտելով) ըսելը , շատ մեծ բազմութիւն մը ցուցնելէն զատ , նաեւ մեծարանօք մեծարելը յեպիսկոպոսաց եւ յիշխանաց եւ ի ժողովրդոց խօսքը կ'ենթադրէ թէ արդէն ծանօթ սիրելի եւ փարելի ըսող էր արթունն Գրիգոր Սերաստացոց , իւրեանց սրբաբանեալ Հայրապետին ձեռնասուն եւ սիրեցեալ Քեռայրն ըլլալուն պատճառաւ . եւ յօժար սրտով աջակից կ'ըլլային նմա ի գործ մեծի պաշտամանն , արժանաւոր օգնականներ եւ պաշտօնեայներ ընծայելով Գրիգորի ի լոյս աստուածգիրութեան դարձնելու համար զՀիւսիսական ազինս , եւ զվեհապոյնն նոցա : Ուստի իւր հետ ձեռնտու առաւ զՍնտոն եւ զԿրօնիպէս , ըզԴիկապիտս եւ զՋենտը Ստորի եւ բազում գունդս գունդս եղբարց յաճախեալ անոցր կրօնաւորական կարգօք զարգարելու համար իւր աստուածատուր նորածին հօտը : Նոյն խոկ իւր սուրբ զաւակունք Վրթանէս եւ Արիտակէս միայնական անբիծ կենաց ճաչակը յԱնահտական գաւառի գտնուած լազմութիւ եղբարց քով առին , եւ ուսան զիմաստութիւնն երկնային մեռեալ յաշխարհի եւ կենդանի յԱստուած կելոյ :

Սրբոյն Աթմասպինեայ եւ Անահտական զաւառայնոց Ս. Լուսաւորչին ցուցած մեծարանաց եւ աջակցութեան քաղցր յիշատակն էր կարծեմ որ երբ առաջին անգամ Սղոպայն եկեղեցական նուիրապետութիւնը ճոխացնելու գաղափարը ծնաւ

Մեծին Ներսէսի ժամանակ Վաղարշապատու Բ. ժողովքին մէջ
յառին 366 , նախ քան զամենայն Սեբաստիոյ Հայ Եպիսկոպոս-
սը յաստիճան Արքեպիսկոպոսութեան բարձրացուցին ի նշան
երախտագիտութեան :

Անահտական գաւառին գերիվերոյ պարծանք է նաեւ որ
յականէ յանուանէ ծանօթ հարիւր քառասուն եւ հինգ փառա-
ւոր վկայից նահատակութեան ասպարէզ հանդիսացեր է , եւ
նոցա սուրբ ոսկերաց գերեզման ընծայեր է իւր սրբոց արեամբ
ոռոգեալ հողին մէջ :

Հայրենասիրութեան նախանձը եւ քաղցր յիշատակը յան-
գէտս հեռացոյց զիս զիտեալ նպատակէս՝ որ էր հերքումն Կու-
թշմիտի յանդուգն զառանցանաց Սրբոյն Աթմնազինեալ վարքը
եւ վկայարանութիւնը իբր անգոյ դիցարանութեան մը նման-
ցընելուն :

Կարծեմ թէ Կութշմիտի այս անգէպ վճիռը ուրիշ բանէ
յառաջ չգար , եթէ ոչ առանց լուրջ եւ զգուշաւոր քննութեան
հապշտապ յանխորհուրդս ձեռներէց լինելու փախաքէն՝ ի վեր
ի վերոյսն քան զմարդկային հասողութիւն հանձարոյ . եւ եթէ
կը ներուի մեզ ըսել՝ նաեւ սակաւիկ մըն ալ նոյն սրբոյն եւ
նորին ժամանակակից ճշմարիտ քրիստոնէից աստուածային օ-
ծութեամբ զօրացեալ կենդանի հաւատքի նուազութենէն՝ որով
զամենայն ինչ վիխրիտփայօրէն եւ ի բնական կարգի կ'ուզէ նը-
կտուել զատել եւ զատափետել՝ մոռնալով Առաքելոյն այն ըս-
քանչելի խօսքը՝ «Քանզի շնչաւոր մարդ ոչ ընդունի զՀոգւոյն
Աստուծոյ , զի յիմարութիւն է նմա , եւ ոչ կարէ՛ գիտել թէ
հոգեպէս քննիցի . (Ս. Կորնթ. Բ. 13) : »

Այժմ կարգը եկաւ աւանդութեան՝ որոյ համար ըսինք թէ
մեռեալ պատմութեան կենդանի ձայնը եւ ստուգութեան ա-
պացոյցն է , մանաւանդ երբ օտարազգի եւ այլակրօն մարդ-
կանց մէջ քարոզուի :

Բոլոր քրիստոնեայ տիեզերքի առանց երբէք բացառութեան
ամեն այլաչեղու եւ այլապաւան ազգաց միաձայն վկայարանու-
թիւնը՝ որ ժամանակակից Մեծին Բարսղի եւ ակամատիս
Հիլարիոն պատուական քահանայի վկայութեամբ վաւերացեալ է
եւ յատուկ տօնախմբութիւնը եւ յիշատակը՝ զոր կ'ընեն ամեն
ազգք քրիստոնէից , եթէ բաւական չսեպուի Հայաստանեայց Ե-
կեղեցւոյ խանձարուրքէն սկսեալ անընդհատ յիշատակարանք եւ
վկայութիւնները , եթէ անզօր համարուին սրբոյն Աթմնազի-

նեայ վարուց եւ սքանչելեաց ստուգութեանը , ինչ ըսելու է ցայսօր կենդանի մնացած աւանդութեան եւ յիշատակարաններուն՝ որուն վասն հայրենակցութեանս սրտիս մէջ տածած ամենասուրբ ջերմեռանդութենէս շարժեալ առանձինն փութով ասկէց քանի մը տարի յառաջ հետամուտ եղայ զգուշաւոր քննութեամբ մի ըստ միովէ ստուգութեամբ տեղեկանալով ի լոյս ընծայելու ի փառս մեր հրաշագործ Հայրապետին :

Անահտական գաւառին մայրաքաղաք Սեբաստիոյ մէջ եւ շրջակայքը որչափ սրբոց եւ նահատակաց ուխտատեղիք կան՝ ցայսօր մեծազոյն մասամբ ծանուցեալ եւ յաճախեալ են աւմեն աղլի ուխտաւորներէ անխտիր , միայն սրբոյն Աթմնազլինեայ Հայրապետին ընաւկայրը ցարդ անծանօթ էր այլ եւ այլ տեղեր ենթադրելով կնարծեօք՝ որք բոլորն ալ անյարմար ըլլալուն նորին վարքին մէջ պատմութեաներուն , մեծաւ փափաքանօք կը հետախուզէի սրբոյն հայրենիքը Փեղաքթովէի մեր գաւառին սր կողմը գտնուիլը զիսնալու : Բարեկազմաբար օր մը բաղմնրախտ Աւդերեանի Վարք Սրբոյն ծանօթութեան մէջ կարգաւոր թէ Ս. Աթմնազլինեայ հայրենիքը միանգամայն եւ սեպհական ստացուածքը Փեղաքթովէ , Միտաքթոն եւս կը կոչուէր , Իլպիկեցոց աշխարհին մէջ մերձ ի սահմանս Սեբաստիոյ , յանկարծ անդրադարձայ թէ Իլպիկեցոց աշխարհը այժմեան էլպէկլին է , Սեբաստիոյ մէկ գաւառը Անահտական , կամ Երլտըզէլիի սահմանակից յԱրեւմտեան կողմանէ , եւ Պիտաքթոնը այս աւուր Պէտրքթօնն է մեր գաւառին սահմանածայրը էլպէկլի մերձ տաճկաբնակ զիւզ մը իբր հարիւր աղքատին տամբ : Բունն տենչանք զզացի Պետրքթօնցիներ գտնելով որք սայլերով փայտ վաճառելու կու գան ի Սեբաստիա հարցնել եւ տեղեկանալ ի նոցանէ : Քանի մը օրէն ետքը զիւզին Նճճը տեսայ , եւ երկար հարցմունքներ ընելով զարմանալեօք լսեցի որ սրբոյն վկայաբանութեան համեմատ պարզ ի պարզոց եւ ճշգորէն կը նկարագրէր ինձ Եկեղեցոց զիւրքը , հրաշագործ աղբիւրը , անիծեալ արօտատեղին , հինգ աշակերտաց վիմափոր գերեզմանները , եւ կ'ըսէր թէ ձեզմէն ԳեօՎէլի մըն է , շատ հրաշագործ , անձրեւի պաշտպան , մինք անունը Աթմն Պապա կը կոչենք , եւ գերեզմանը կանթեղաւառութեամբ կը պատուենք . եւ այն Սւելորդ է ըսել թէ՛ ուրախութիւնս անպայման եղաւ այսպիսի ստոյգ տեղեկութեամբք փափաքիս հասած ըլլալուս համար , եւ որոշեցի յարմար ժամանակ մը գտնելով

անձամբ երթալ անդ եւ ականատես լինել . շատոնց կը յանկայի Աստղիկ լերան գլուխն ալ ելլել՝ որու վրայօք այլեւ ալ անհաւատալի առասպելներ կը պատմուէին սամկայ բերանը :

1879 Յուլիս 23 երկուշաբաթի պարզ եւ գեղեցիկ օրը առաօտեան զով եւ քաղցրասիւզ օդով Պալապանեան Գեր. Պետրոս վարդապետին հետ Բրգնիկէն մեկնեցանք նախ յԱստղիկ լեռը , եւ անտի ի Պէտրքթժժն ճանապարհորդելու զիտմամբ , ճամբայները ահուտ եւ վտանգաւոր ըլլալուն համար չորս առոյգ քաջաձի գինեալ երիտասարդներ ամենլով հետերնիս խոտաւէտ ծաղկագարդ հովիտներէ եւ բարձրաւանդակներէ զուարճալի ճանապարհորդութեամբ ձիավարելով ինն ժամէ կտքը հասանք Երւորդ կոչուած տաճկաբնակ զիւղը՝ որ անմիջապէս Աստղիկ լերան ստորտը շինուած գեղեցկապիր կրկու հարիւր տամբք աւան մըն է : Այն գիշերը ասպնջականեց զմեզ հիւրամիճար զիւղապետը Հասան Քեհեան, որուն արդէն ծանօթ էինք : Հետեւեալ օրը լաւ նախաճաշ մը ընելէն յետոյ Հասան Քեհեանցէն շորհակալ ըլլալով առաջնորդ մը խնդրեցինք ի բարձրադիր ի գեղեցկատեան եւ ի զիցանուէր Աստղիկ վերելքի համար : Անհուն դժուարութեամբ միանգամայն ալ շատ մեծ զուարճութեամբ վերելքն եւ վայրէջը նոյն առուր մէջ կատարել յաջողեցանք , որոյ հետաքրքրաշարժ ստորագրութիւնը յօդուածիս վերջը շարայարելի է : Զորեքշաբտթի օրը կանուխ մեկնեցանք Երւորդէն դէպ յԱրեւմուտս արշալոյսին ոգիպարար օդը ծծելով . երկու ժամէն հասանք ի կէտ ակնկալեալ նըպատակի ճանապարհորդութեան մերոյ ի Պէտրքթժժն , ի հայրենիս մեր հրաշագործ հայրապետի սրբոյն Աթանաղինեայ վկային :

(Շարայարելի)

Սահակ Ծ. Վ. Հաճեան



ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻԶ

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՑ

ԱՌԱՋԻՆ ՎԵՑՄՄՍԵԱՅ ՔՆՆՈՒԹԻՒՆՔ

Անցեալ Մարտի Ցին տեղի ունեցան Ռստումարանիս առաջին Ռստումական տարւոյ վեցամսեայ քննութիւնը :

Ինչպէս յայտնի է Թերզեան Թովմաս Էֆենտիի տեղեկագրէն , զոր ի ստորեւ կը հրատարակենք , Ռստումարանիս վարչութիւնը 1890 տարւոյ Փետրուարէն մինչէս ցվերջ Յունիսի հազիւ կարող եղած էր երէք դասու աշակերտներ կերպաւորել , որ է ըսել թէ միայն 1890 Սեպտեմբերի սկիզբէն ցվերջ Փետրուարի 1891 տարւոյ , այսինքն կանոնաւոր ուսմանց վեց ամսուան Ռստումարանիս երէք դասուց ուստան վիճակին քրննութիւնն էր առաջիկայս :

Նորին Երանութիւն Ստեփանոս Պետրոս Ժ. Ռստումարանիս հիմնադիրը , հաճեցաւ նախագահել նորածին ուսումնարանին այս հանդիսին , ընթերակայութեամբ իւր փոխանորդ Արհիապատիւ Արայանեան Կարապետ Արքեպիսկոպոսի եւ պատեալ Կ. Պոլսոյ իւր կղերին բարձրատիճան եկեղեցականներէ :

Ազգային դպրոցական հաստատութեանց վարիչներն եւ պատուական հասարակութեանս ընտիր խումբ մը եւ Ռստումարանիս բարձր խնամակալութիւնը հաճած էր իւր ներկայացուցիչներով խրախուսել աշակերտները եւ ուսուցչաց դասը , որք առաջին անգամ կը ներկայանային խմբովին հասարակութեան՝ հարցաքննելու համար հրապարակաւ իւրաքանչիւրն իրենց ճիւղին մէջ :

Գրաւոր քննութիւնը , որ 15 օր տեսելով աւարտեալ էին 8 օր առաջ , դրուած էին ի տես հանդիսականաց : Այս գրաւոր քննութեանց հետ ի ցոյց դրուած էին դարձեալ աշակերտաց իրենց վեց ամիս առաջ ամեն մէկ ուսմանց եւ գիտու-

բեանց ճիւղի վրայ ըրած գրաւոր շարադրութիւնքը , յառաջդի-
մութիւնը առելի ակներեւ ընելու համար :

Բերանացի քննութիւնք թէն կարճ՝ ժամանակի սղութեա-
նը պատճառաւ , սակայն գոհացուցիչ եղան , այնչափ առելի՝
որչափ այս քննութեանց դրութիւնը նոր էր եւ դժուարին՝ բաղ-
դատմամբ այն դրութեան որուն կը հետեւին ընդհանրապէս
դպրոցական հաստատութիւնք տյնպիսի պարագայից մէջ :


Մեծապատիւ Գարագաշ կարապետ Էֆենտի յոյժ գեղեցիկ
եւ բարձր գաղափարօք եւ զգացմամբ լի աստեախօտութիւն
մ'ըրաւ զասական ուսմանց կարեւորութեան եւ մասնաւորապէս
Ռստոմնարանիս հաստատութեան ամենամեծ պատեհութեան եւ
հարկաւորութեան վրայ : Աւելորդ է ըսել թէ կրկին եւ կրկին
ծափահարութեան արժանացաւ այս ճառախօտութիւն :

Քննութիւնները վերջացան Գեքեքեքանիկ Հոգեւոր Տեսուն
մէկ խրախուսիչ յորդորովն , որուն մէջ լիաբերան կը
գովեր ուսուցչաց ընտիր մարմնոյն աշխատութիւնը եւ շնոր-
հակա կ'ըլլար իրենց , եւ կը քաջալերէր զաշակերտս անխանջ
յառաջադիմելու իրենց սկսած իմաստութեան ասպարիզին մէջ :

Ի վերջէ հանդիսականք այցելեցին Բնագիտութեան եւ
Տարրագիտութեան գործեաց , ինչպէս նաեւ Հանքաբանութեան ,
Երկրաբանութեան ժողովածոյից , Կենդանաբանութեան , Բու-
սաբանութեան , Անդամագնութեան տախտակներու զահլիճնե-
րը , գոր Վսեմափայլ Արխտակէս Էֆենտի Ագարեան նուէր ը-
րած է , եւ գորս ջբնաղ ճաշակաւ եւ ամբողջ միամտեայ աշ-
խատութեամբ հաճեցաւ յարդարել եւ կարգադրել Վսեմ Հրանտ
Պէյ Տիւզ :

Հրախրեալք մեկնեցան լիուրի համոզմամբ , ինչպէս կը
հաւաստեին զնոյն իրենց աջաց գորովայից եւ գուարք նայ-
ուածքը ի վերայ աշակերտաց եւ ուղղած քաջալերիչ խօս-
քերն առ նոսա , եւ մանաւանդ իրենց ազնիւ սրտով յայտնած
կրկին եւ կրկին շնորհակալութիւնքն առ ընդհանուր Վսեմ
Խնամակալութիւն Ռստոմնարանիս եւ առ ուսուցչաց դասն եւ
առ Տեսչութիւնն , թէ թիջ ժամանակի մէջ այսչափ յառաջա-
դեմ եւ բարեկարգ ձեւ ստացող Ռստոմնարան մը , արդիւնք
անդու ջանից եւ մեծահոգի անձնանուիրութեանց , փայլուն
ասպագայ մը կը խոստանար եւ ստուգապէս կիրք եւ իմաս-
տուն պատանեաց խումբեր հետզհետէ :

Տեղեկագիր Թուրքաւ Է.Ֆ.ի Թերզեանս



Ուրբաթի 8/20 Մարտ 1891

Գերերզանիկ Հոգեւոր Տէր,

Տեաքք Հանդիսականք,

Գրեթէ սարի մը բոլորեցաւ յորմէհետէ Ուսումնարանս եղեալ ընդ հովանաւորութեամբ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի՝ սկսաւ իւր ընթացքն, իրեն օրինակ առնելով Եւրոպայի երկրորդական վարժարանաց Դասական ծրագիրը՝ դոյզն փոփոխութեամբք ըստ պահանջից մեր երկրին: 1890 Յուլիսի մեծ արձակուրդէն առաջ հազիւ դեռ հնար եղած էր Հոգաբարձութեանս կարգերն ըստ կարողութեանս աշակերտաց՝ եւ ընդունուած ծրագրին համաձայն խմբել դասերը: Հետեւաբար առաջակայ մասնական քննութիւնը 1890 Սեպտեմբերէն սկսեալ մինչեւ դայսօր՝ կանոնաւոր ընթացից վեցամսեայ միջոց կը բովանդակէ եւ անոր արդիւնքն է զոր կ'ենթարկեմք Ձեր բարձր ուշադրութեանս: Բայ ի բազմաթիւ խոչընդոտներէ, զորս աւելորդ է հոս մի առ մի յիշատակել, եւ որք յարակից են ամեն նորահաստատ կարեւոր ձեռնարկութեանց, մեր Վարժարանն երկու մեծ դժուարութիւն ունէր յաղթելու: Նախ՝ մեզ յանձնուած աշակերտք ոչ միայն նոյն ոճով կրթութիւն ստացած չէին որ պէթ նոյնօրինակ աշխատութեամբ կարելի ըլլար ի մի ձուլել զայնս, այլ եւ իրենց ուսման լեզուն իսկ տարբեր էր, ու մանք Ֆրանսերէն՝ սակաւաթիւ այլք հայերէն եւ այլք եւս հազիւ աղաւաղեալ տաճկերէն լեզուաւ մը բացատրել կարենալով իրենց միտքը: Երկրորդ՝ Ուսումնարանս չունենալով արդէն կազմակերպեալ դասակարգեր, որոց մէջ հնար ըլլար մեզ ղետեղել նորեկներն ըստ իրենց կարողութեան, եւ միեւնոյն կարգի աշակերտք իսկ զանազան ժամանակներ եկած ըլլալով յՈւսումնարանս, կարեւոր խնդիր մ'էր՝ հաստատել նոյա դասական ընթացից մէջ այն միօրինակութիւնն ու շղթայակալ շարացարութիւնն, որ կը կազմեն զօրաւոր դասակարգերն եւ սպազայ բարձրա-

գոյն ընթացից հաստատման հիմունքը կը պատրաստեն : Հոգաբարձութիւնս այսօր կը ներկայացնէ ձեզ չորս դասակարգեր գրեթէ ամբողջովին կազմակերպեալ , այն է, Լիսէական ընթացից ՏԵԳ եւ ԴԵԳ կարգերը՝ որք ըստ ամենայնի հետեւեցան մեր ծրագրին, եւ նախապատրաստական դասի մը հետ՝ բարձրովին դեռատի մանկանց համար ընտելարան մը: Չուղիւղվ դեղծանիւլ Ձեր թանկագին ժամերովն բերանացի քննութիւններն մի օրուան մէջ ամփոփուած են , այսչափս բաւական համարելով դպրոցիս ընթացից եւ ոգւոյն վրայ ընդհանուր՝ այլ պայծառ գաղափար մը տալու համար : Բայց այս բերանացի քննութեանց սահմանեալ ժամերուն անբաւականութիւնը լրացնելու համար՝ կը ներկայացնէ Ձեզ նաեւ աշակերտաց գրաւոր քննութիւնները , որք ամենայն ինտամով կատարուած են ընդ աշակերտ չ հսկողութեամբ Տեսչութեան , եւ որք ոչ միայն սանուցս իսկական արդի վիճակն ի լոյս կը հանեն՝ այլ նաեւ առիթ կ'ընծայեն այս գրութիւնները բաղդատելով նոյն աշակերտաց մեր դպրոցը մտնելու ատեն ըրած նմանօրինակ աշխատութեանց հետ՝ ցուցնելու թէ յոր կէտէ յոր կէտ հասեր են :

Միւրեւի է մեզ յուսալ , Աստուածարեալ Տէր եւ Մեծաշուք Հանդիսականք , որ գէթ մեր անկեղծութիւնը Ձեր հաճութեան կ'արժանանայ : Հոգաբարձութեանս համոզումն այն չէ թէ բացառիկ դպրոց մը կազմեց , այլ թէ իրեն յանձնուած մանկուոցն թանկագին ժամերն վայրապար չվառնեց եւ անդու ճգամբք ջանաց պատրաստել զնա Ուսումնարանիս դասական կրթութեան : Գոհութեամբ կրնամք հոս վրայել առաջի Տեսարցի թէ մեր աշակերտք լի են եռանդեամբ յուսմունս, եւ թէ իրենց վարքն ու դպրոցական եւ ընկերական կենակցութիւնն արժանի են Ձեր քաջալերական գրուատեաց : Հոգաբարձութիւնս վրաստահ է թէ նոցա ըրած ուսումնական յառաջադիմութիւնն եւս գոհութիւն պիտի պատճառէ Ձեզ: Ամեն դասատուք այս մասին միայրան են զանոնք գովելու : Հոգաբարձութիւնս պարտ անձին կը համարի իւր շնորհակալքն յայտնել այս առթիւ իրեն այնչափ սրտի մտօք գործակցող դասատու Տեսարց: Ձեմք ուրանար թէ կայ տակաւին բազում ինչ ուղղելի եւ յաւելլի մեր ծրագրին եւ ոգւոյն լիապէս համաձայնելու համար : Մարդկային ամեն բան կատարելութեան օրինաց ենթակայ է , եւ ճշմարտութիւնն յաճախ յետ երկայն եւ տաժանելի դանդաղմանց կը գտնուի . բայց Հոգաբարձութիւնս լի է նաեւ յուսով թէ Ձեզ

նման ինամակարաց եւ մեր քաջ դատաւորաց անձնանուէր եւ յարասեւ ջանքերն ուղղելով ի մի կէտ նպատակի , այն է ի հետզհետէ բարեօրումն վարժարանիս՝ պիտի յաջողի շնորհիւն Աստուծոյ կազմելու այնպիսի Ուսումնարան մը՝ որոյ բարոյական եւ գիտնական արդիւնք գոհացնեն զճնոգս, զաղոյն, զհամօրէն վաստակաւորս , եւ ի վեր քան զամենայն մեր Օգոստոս փառ հայրագութ Ինքնակալը Սուլքան Ապտիւլ Համետ Խան , որ հզօր հովանին կը տարածէ ամեն ուսումնական հիմնարկութեանց վրայ , եւ կը պայծառացնէ օր ըստ օրէ իւր ընդարձակածաւալ Պետութիւնն ազգի ազգի վարժարանօք : Այս ազնկալեալ յառաջադիմութիւնք են նաեւ որ զէթ մասամբ պիտի փոխարինեն այն մեծամեծ զոհերն զոր Գերնջանիկ Հոգեւոր Տէրն մեր եւ իւր Վսեմաշուք եղբայրն Արիստակէս էֆ. Ազարեան եւ բազում այլ մեծանուն Սատարք՝ կրբէք չզլացան մեզ յօրէ անտի բացման Ուսումնարանիս . եւ որոյ ուրախ է Հոգաբարձութիւնս այս փոքր հանդիսիս առթիւ մատուցանելու իւր զարմանաց եւ սրտազին շնորհակալեաց հաւաստիքը :



ՊԱՅԲԱՒ ԱԶԱՆՅ ՅԱԻՍՏԻՒ-ՈՒՆԿԱՐԻՍ (*)



(Շարունակութիւն եւ վերջ)

Այսրալայիկեան միապետութեան 12,650,000 ընակիչք , Եւրոպա 80 միլիոն կրեւեցուցիչ ընծայեցնող մեծ եւ սոռար Սլաւ ցեղին սեպհական են : Ասոնք յառաջապահ են միայն . ասոնց սատարիչ ձեռք մ'երկնցնելու կազմ եւ պատրաստ մարմնոյն , Ռուս պետութեան անեղ զանդուածոյն , անկառոյց են : Սոյն ցեղն Այսրալայիկեան միապետութեան մէջ , ի Պոհեմիա եւ ի Մորաւիա «Չեխք» , ի Կալիչիա «Պոզոնք» եւ «Ռութիւնք» , Սթիրիա եւ Գարինիթիա եւ Գարնիալի մէջ «Սլովաք»

(*) Տե՛ս Պատիւք Ա. Տարի , էջ 549 :

եւ ի Գաղմատիա «Սոսուաթք» անուամբ կը զանազանին : Ասանցմէ ամենէն խիստ ու հոծը , եւ թուով եւ ազգու կենդանութեամբ ամրացեալը «Չեխ» խումբն է : Ի Պոնեմիա՝ ուր բընակչաց բազմութեանն երեք առ հինգերորդ մասը կը կազմեն , իրենց հակառակորդացն՝ Ալեմանաց , յուսահատեալ ճգանցն եւ գիմադրութեանց հակառակ , տեարք են . լրագիրք , դպրոցք եւ համալսարանք ունին . պատուոց եւ փառաց զահ բարձրացող , յատեանս գործածուող , եկեղեցեաց եւ թատրոնաց եւ Բապոյ յորջորջեալ ժողովրդական ակմբոց ընդունելի եղող իրենց տոնմական բարբառը , զԳերմանականն իւր առջին կոր ի զլուխ յետս յետս ընկրկելու կը ստիպէ :

Սոյն Չեխաց հիմնական ծրագիրն է , 1. Պոնեմիայի թագաւորութեան արքայանիստ Բրակա քաղքին մէջ Աւստրիական կայսերաց թագ կապել տալ : 2. Պոնեմիայի թագին պատկանեալ հողոց վրաց գերմանական տարեր ազդեցութիւնը ջլատել : 3. Աւստրիական Ալաւաց միութիւն մը յառաջ բերել :

Վիէննայի խորհրդանոցին մէջ Չեխաց մեծամասնութիւնս ապահովցնող Սլովէնք եւ երբեմն նաեւ Պօզննք , երկուութեան լուծումն են , մէն մի ազգութեան իրաւունքն ընձեռող դաշնաւորական վարչութիւն մը կը պահանջեն : Եթէ «Նախնի Չեխք» իրենց յարկելի Ռիկէր անուն զլսոյն ազդեցութեան ներքեւ , օտար քաղաքական խնդրոց նկատմամբ կերպ մը ըզգուշութեան մտադիր էին , այժմեան «Նրիտասարդ Չեխք» առաւել քաջասիրտ կը խորհին եւ գոչմամբ կը հռչակեն թէ Աւստրիական հզօր հարստութեան նկատմամբ Գերմանիայի դաշնակցութիւնն իրենց աղետաբեր կ'երեւայ եւ սոյն պետութեան ազգաց մեծագոյն առաւելութեան ծանր գեղամակութիւն կը պատճառէ» : Յնդական իննամութիւն մը թէպէտ զՉեխս առաւել դէպ ի Ռուսաստան կը խթէ , սակայն Գաղղիայի համար ալ իրենց տածած համակրութիւնը նուազ վառվռուն չէ :

Սոյն «Նրիտասարդ Չեխք» միայն այս տարի յամսեանն Մարտի , կառավարական եւ քաղաքական ակմբոց մէջ ոչ առանց խորին տագնապութիւն մը յառաջ բերելու , Վիէննայի կայսերական խորհրդարանի անդամ ընտրուեցան : Ալեւորն Ռիկէր երեսնամիայ բազմաջան աշխատութեամբ պատկեալ Իտալիա անցաւ : Այսպէս «Նրիտասարդ Չեխ» կուսակցութեան զըլխաւոր թերթն «Նարոսնի Լիսթի» :

Սլովէնք Ալէման տարեր դէմ կը պայքարին , Գաղմատա-

ցւոց աշխարհի բնակիչք Իտալացւոց հետ կը մաքառին եւ երկուքն ալ Չիխաց թեր եւ հետեւողք են : Իսկ Կալիցիայի Սլաւքը սեպհական գիրք մը բռնած են : Գիւղացւոց դաս կազմող յունածէս կաթողիկէ Բուժենք իրենց վաղեմի կալուածատեարց աղբեցութենէն ազատելու կ'աշխատին : Ռուսական պետութեան դէմ թշնամական զրաժմուռք տածելէ հետի , սակայն Ալեմանաց ալ դէմ կլլելու կը վարանին : Իրենց հին հայրենիքը ձեռք ձգելու միակ բաղձանքն ունեցող Պողոնք , Ռուսական պետութեան խեթիւ կը հային եւ Գերմանիայի ամենայն խոստումներ ասոնց սիրտը տաքցնելու ատակ չէ : Եթէ Կատարինէ Բ. Պողոնիան բաժին բաժին բրբա , Փրեզերիկոս Բ.ն ալ սոյն բաժանման առջի գաղտիարն յղացողն եղաւ :

14
Խնդիրն ամիտիներք : Եթէ իրարմէ զատ նպատակ եւ շահ ունեցող զԻտալացիս եւ զՊողոնիացիս ի բաց հաններ , Այդրլայթեան պայքարն Ալեմանաց եւ Սլաւաց , իսկ Այգրալայթեանն մէկ կողմանէ Մաճառաց եւ միւս կողմանէ Ռոմանաց եւ Սլաւաց մէջ կը մնայ :

Մաճառք կամ Ունկարք Թ. դարու ինքզինք Աստուծոյ խարազան անուանող անագորոյն Ատաղիլայի ասպատակն ու արչաւանքը նորոգող խրոխտ ազնուականաց յանդուզն սերունդքն են : Այր Մաճառ՝ սէյ , ընդ հենգն յանձնապատան , քաջասիրտ եւ տիեզերական պատմութեան մէջ յակն անկանող , մեծաշուք եւ փառաւոր է : Մաճառաց ասպետական արութիւնն ու քաջութիւնը , քաջուածքն ու ճեմք , գնացից փոքր ինչ թատերական պերճութեան թիթեւ հովը , բաւական ժամանակ գաղղիական միտքն ու երեւակայութիւնը զբաղցուցին եւ համակրանքն յաիշտակեցին : Գաղղիա 1848ին զՄաճառս՝ ազատութեան իրր աներկիւզ եւ քաջ ըմբիչ եւ յառաջամարտիկ , ջերմաջերմն ողջունեց : Ունկարք յիրաւի ռամկապետական չեն , այլ առանձինն եւ ինքնահաճ ազնուապետութիւն մը : Եթէ չի՛րամայէ , ինքզինք ընկճեալ եւ հարտահարեալ համարող առանձինն եւ բարձրամիտ ազնուապետութիւն մը : 1848ին ոչ եթէ ազատութեան այլ տիրապետութեան ողբով պատերազմի դաշտ նետուեցաւ : Այգրալայթեան պետութեան մէջ ինն միլիոն Սլաւաց եւ Ռոմանաց դէմ , իրենք Մաճառք 55,000 ըլլալով , զայլ ժողովուրդս իրր հպատակ համարելու պահանջումներն ունին . վարչական գործոց մասնակցութենէ զանոնք կը մերժեն , իրենք միայն կը կառավարեն , իրենց շահն

ու. օգուտը միայն կը խորհին . իրենց բարի երևցածը միայն մեծարոյ կը համարին . իրենց լեզուն՝ Մաճառերէնն , ամենայն ուրեք տիրել տալու հետամուտ են եւ հակառակորդ զաղչս Մաճառայնկու համար իրենց սրտակից եւ մտերիմ բարեկամաց , Ալեմանայ , Ալտա—Լօրէնի մէջ ի կիր արկած ամեն տեսակ հաւանեցուցիչ միջոցներն ըստ ամենայն ճշգուծեան եւ խտտութեան ի դործ արկանեն : ԶԱւստրիա—Ունկարիա Գերմանական տէրութեան ներքնադաս ընող նիզակակցութեան գտակն իսկ նոյնք են : Իրենց մէջէն ամենաժողովրդական քաղաքապետաց մին , Անդրաստի կոմս , զայս նիզակակցութիւն ներշնչած եւ ի վրուս հանած ըլլալն իրեն փառք եւ պատիւ կը համարի : Հասցալուրիեան ինքնակալութեան ազետաւոր համարեալ զայս նիզակակցութիւն , Մաճառք՝ ամեն կողմանէ վերենք պաշարող որչափ ազգ ու ցեղ՝ նոյնչափ ալ ոխերիմ են անհաշտ թշնամի յարուցած ըլլալուն , իրենց համար բարեպատեհ պէտք մը համարած են : Մաճառք՝ ի վերուոյ Գանուրի եւ Թայսի դետող առեալ , Հիւսիւսէն Ալաւ ազգէ եւ զԱրեւմբտան Գարբաթա զրաւող Ալովաքներէ կը նեղուին . Արեւելքէն Թրանսիլվանիայի սարահարթը բնակող յԱւստրիական Ռումէնաց կը տաղնապին , Հարաւէն դարձեալ Ալաւաց ահը զիրենք կը պատէ եւ Տրաւ եւ Մաւ դետոյ միջալակցը բռնող Սերպ—Պոռուսիայ երեսէն երկիւղ կը կրեն : Ի թիկանց Աւստրիական Ռումէնաց , անկախ Ռումէնիա մը կանգնուած կեցած է : Անկախ Սերպաստան մը Սերպ—Պոռուսիայ թիկունքն առած կը դիտէ կը կենայ , եւ յազթ եւ վիթիսարի Ռուսաստան մ'ալ Ալովաքաց մոյթ ու նեցուկ է :

Իսկ երեք ու կէս միլիոն Աւստրիական Ռումէնք Հասցալուրի Տան յանձուկս յարեալ ըլլալով անգամ , զիրենք թշնամւոյն հաճոյիցն յանձնող քաղաքականութիւն մ'երբէք հաշտակամը չեն կրնար տեսնել :

Գրեթէ երեք միլիոն եւ ի բազմաց հետէ՝ հարստակ եւ հեզահամարոյր ժողովուրդ մը , Ալովաք , Ալաւաց հաւասարապատ ըլլալ կը խնդրէ :

Հակամաճառական հակակրութեան ճշմարիտ կեզրոնալայրը Պոռուսիաստանն է : Այս գաւառին առանձինն աւազածոյրը , քաղաքապետ կամ Պանը Ունկարական նախարարութեան թէպէտ յաւաստ տրուած են , սակայն եւ այնպէս Սերպ—Պոռուսիա իւր յաւաճապիմութեան շարժառիթ ելող Տիաքովարի Շթրուս

մայէր եպիսկոպոսը միմիայն իրեն գլուխ կը ճանչնայ : Պոհն-
միական Չեխաց նման , Սոուաթք եւս օտար ձեռնձգութեանց
դէմ , յառաջ քան զամենայն իրենց բնիկ լեզուի պաշտպան
լինելու , մատենագրութիւնն ու պատմութիւնը կենդանացը-
նելու ձեռնամուխ եղած են : Ակրամի մէջ գեղեցիկ արուեստից
Ակատեմիա եւ Համալսարան մը հաստատուած եւ ամեն կարե-
ւոր կեդրոնք դպրոցիւք ամրացած են : Գոնէ իրենց բարոյական
ինքնօրէն աղիկամութիւնն հաստատ պահելու յաջողեցան : Եթէ
այլ եւ այլ ազգաց եւ ազանց այս պայքարն ու մաքառունն օր
մը նուազ խաղաղական հանգամանք մը տոանայ , 1848 ամին
ահաւոր հակառակորդք Սոուաթք , զՄաճաւս դարձեալ ողջու-
նելու բարեկարտե՛ն առիթը չեն կորսնցնիր : Սոուաթք՝ իրենց
Պանն եղող անմոռաց եւ անյաղթ Եէլաջիջի հետ , կտ ինդ կտ
Մաճաւսց յաղթող բանակին առջեւն առած եւ Հասպուրկի
միահեծան իշխանութիւնը կործանմանէ ազատած ըլլալը մեծաւ
հաճութեամբ կը յիշեն եւ երբէք մոռնալիք ալ չունին :

Կան նաեւ մերադնեաց զաղթականութիւնը ի Կալիցիա
եւ ի Թրանսիլվանիա : Այս հոռքինք , ուրիշ ազգաց նկատմամբ
գործածուած Ունկարական յօրինաւորութեամբ (système) ընկ-
ձեալ են : Այս զաղթականութեանց վրայ «Հանդէս Ամսօրեայ»
բաւական գոհացուցիչ տեղեկութիւններ տուած է : (*)

ՅՍևսորիա-Ունկարիա դանուող նուազ կարեւոր խումբ
խումբ ժողովրդոց նկատմամբ ծանօթութիւն մը պատե՛ն առիթ :

Աքանչեկիաց կարգն է արդարեւ Սևսորիական մեծանուն
Պետութեան խաղաղական հոգին եւ վարչական իմաստութիւնն
ու խոհեմութիւնը : Ի հակառակաց տարերց կազմնալ զայս լայ-
նատարած տէրութիւնը դար ու դարերէ վեր՝ զազգս ի մի ձու-
լելու գաղափարէ բոլորովին ազատ եւ զգոյշ , ի գոհութիւն ա-
մենայն ազգաց կառավարած , կրթած , մարդած եւ յամենայնի
զանոնք յառաջագէմ ընելու օգնած է : Սոյն լայնանիստ Տէրու-
թեան մէջ Ազանց պայքարն երբէք քաղաքական նշանակու-
թիւն մ'ունեցած կամ վտարանջութեան կերպ մը զվեցած չէ :
Բնական է ամենայն գոյի իւր գոյութիւնը պահելու ճիգն ու
ձգտումը : Այս մեծագոր եւ Աւաղ Տէրութիւն՝ խաղաղ եւ ան-
զորր հոգեով զազգս եւ զաղինս կառավարելէ զատ , համա-
կրանքն իւրաքանչիւր սղգաց սղգած է , եւ ի մասնաւորի արդի

(*) Հանդէս Ամսօրեայ , Վէին . 1891 , Թիւ 1 , 2 :

գահակալ՝ Նորին Առաքելական Վեհախառութիւն Փրանկիսկոս Յովսէփ Ա. , չնորհիւն Աստուծոյ կայսր եւ թագաւոր , իբր արժանաւոր Պայազատ Հապսպուրկեան գահուն , իր փառաւոր նախնեաց արքունական Տան սեպհական զեղեցիկ եւ ճաշխարհիկ առաւելութիւնքն իւր նուիրական անձին վրայ կեդրոնացոցած , իբր հարազատ եւ ինամոտ Հայր , ինքզինք իւր ժողովրդեան սիրելի եւ միանգամայն պատկառելի բրած է : Արեւմուտք եւ Արեւելք սոյն մեծազօր Պետութեան եւ Նորին մեծափառ Վեհապետաց առանձինն եւ մասնաւոր համակրութիւն կը տածեն : Օսմանեան օգոստափառ Կայսերաց փառաւոր շարք մը , եւ ի մասնաւորի այժմեան Վեհապետ եւ յաղթող ՂԱԶԻ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԽԱՆ մէր բարեզուծ Կայսրն ու թագաւորը , սոյն մեծազօր Տէրութեան իբր ազնիւ՝ հաւատարիմ եւ անկեղծ գրացոյց , մասնաւոր իմն սէր եւ բարեկամութիւն տածած է եւ կը տածէ : Մեր նուաստ Հայկազնեայքս եւս , Ղազի Սուլթան Համիտ Խան մեր գթած կայսեր եւ իւր հզօր Տէրութեան խնամքը դարեր ու դարերէ վեր վայելողք Թորգոմաց զաւակունքս , Հապսպուրկի մեծանուն տան զուարթառատ հիւրասիրական երախտիքը վայելելու կերպիւ իւրք երջանկապէս արժանացած ենք : Ազգիս բարոյական եւ ուսումնական յառաջադիմութեան սատար սոյն անմոռանալի բարեաց եւ երախտեաց անմահ յիշատակն յախտեանս անկեղծ եւ անջինջ կը մնայ Հայ սրտից վրայ :

Հ. Մէսրոպ Մ. Վ. Ծաղկեան

ՀԱՆԴԷՍ ՕԾՄԱՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՅՈՅ Ի ՊԱՐՏԻԶԱԿ

Ապրիլ ամսոյ 25 հինգշաբթի առաւօտ այլ մի քանի ուղեկցաց հետ մտայ կամուրջէն դէպ ի Հայտար-Բաշա մեկնող շողեհաւն , որ կէս ժամու մէջ հասաւ ի Հայտար-Բաշա , եւ մասնք փութով ի շողեհաւան , որ ըստ Արեւելեան ժամացուցին ժամ 3 1/2ին մեկնեցաւ անտի : Լերինք եւ բլուրք , ձորք ,

հովիտք եւ դաշտք ծլած եւ դոյնազոյն ծաղիկներով զարդարեալ էին , եւ այս տեսարանն կը տեսէր մինչեւ ցՆիկովիդիա : Ժամ 8 1/2ին հասանք ի Նիկովիդիա , ուր փոքր ինչ հանդըստացանք , եւ այց եղանք դերեզմանի Սրբոյն Պանդալէանի , որ քաղաքէն կէս ժամաւ հեռի է : Երկրորդ առաւօտ նոյն ուղեկցաց հետ առաւօտեան ժամ 1 1/2 ին մտանք ի չոզենաւն եւ անցանք ի ծովկզրն Պարտիզակի : Յատկապէս Պարտիզակէն եկած ձիերու վերայ հեծնելով ճամբայ եղանք . անհնարին է կատարելապէս նկարագրել զաշտերու , հովիտներու , բլուրներու եւ լեռանց գեղեցիկութիւնը . ամէն տեղ կանաչազարդ , ամէն տեղ այլ եւ այլ ծաղիկներու տեսակք տիտեալ , ամէն ծառերու , թուփերու վերայ քաղցրածաճն սոխակք եւ այլ թռչունք , իրենց հրաշալի դայլայլիկներով զճանապարհորդն կը զմայլեցնեն : Պարտիզակ եւ բոլոր իւր շրջակայք կատարեալ զրախտ մի է : Օդն մաքուր , զիւրքն բարձր , ջուրերն անթիւ , ջինջ եւ օդոտակար . իսկ տներու եւ փողոցաց նկատմամբ լաւ է լռել : -- Հասանք ի Պարտիզակ , ուր մեծ մարդատիրութեամբ հիւրընկալեցանք : Նորակառոյց եկեղեցին բաւական ընդարձակ , լուսաւոր եւ կարի գեղեցիկ է : Առաջնորդարանն կամ վանատունն՝ որպէս նաեւ մանչ սղալոյ վարժարանն , որք կից են Եկեղեցւոյն , բաւական ընդարձակ սքանչելի պէնք , զի Պարտիզակի արեւմտեան կողմն եւ նոյնին ծայրն լինելով ամէն կողմանէ բաց հորիզոն մի ունի իւր առջիւ : Գիւղաքաղաքին Կաթողիկեայ Հայոց Ժողովրդապետ Յարգ. Հայր Ներսէս Վարդապետ ճնտոյեան եւ նորա օգնական Պատ. Հայր Աւետիք Գաղէզեան , որպէս նաեւ տնտես կամ մատակարար Մեծ. Հայր Անանիա Առնուտախճեան , Վենետիկոյ Միսիթարեանց հանրածանօթ հիւրատիրութեամբն զմեզ ընդունեցան : Ետքաթ առաւօտ 27 Ապրիլի , բազմաթիւ անձինք մեկնեցան ի Պարտիզակէ գէպ ի ծովկզր , յորոց միջի էր նաեւ Վերապ. Հայր Ներսէս Վարդապետ ճնտոյեան , Կաթողիկոսական-Պատրիարքական Փոխանորդ Արհիպագաթիւ Ասլանեան Կարապետ Արքեպիսկոպոսը զիմաւորելու համար , որ ի զիմաց Գերերջանիկ Կաթողիկոսին կու գար ի Պարտիզակ , նորաչէն Եկեղեցին օծելու համար : Ժամը գրեթէ 3 1/2 էր երբ Նոյնին մերձենալն ծանուցուեցաւ : Նորաչէն եկեղեցւոյ զանդակներն սկսան հնչել եւ գիւղաքաղաքին աւետել Արհիպագաթիւ Փոխանորդին գալուստը : Խուռն բազմու-

Թիւն կը դիմէր յեկեղեցին . դպիրք զգեստաւորեալք խաչիւ եւ մոմեղինօք , նոյնպէս քահանայք եւ սարկաւազուհւք կը մընային նորա գալստեան . եւ ա՛նա վեց ձիււոր եւ հրացանակիր ոտականք յառաջոյ , Պատրիարքարանի Եսսախօնին , քահանայք , պատուաւոր աշխարհականք , որոց մէջ էր Պարտիզակի քաղաքապետ (պէլեդէյէ բէտի) Մեծապատիւ Մկրտիչ Էֆէնտի Սարգիսեան , եւ այլք . եւ ի վերջոյ Արհիապատիւ Փոխանորդն ձիերու վերայ հեծած հասան , եւ իջնելով , Արհիապատիւ Փոխանորդն զգեցաւ շուրջառ , եւ առաւ գաւազան եւ խաչ ի ձեռս , եւ «Հրաշափառ» շարականը սկսան երգել զըպիրք , եւ թափօրն յառաջ խաղաց զէպ ի վանատունն : Վեց սպիտակազգեստ մանկունք ծաղկալից կողով ի ձեռին , Արհիապատիւ Փոխանորդին առջեւ փափկիկ եւ փոքրիկ ձեռքերով ծաղիկ կը սիրւէին : Այսպիսի հանդիսիւ եւ թափօրով եղանք ի սրահ վանատան , ուր Արհիապատիւ Փոխանորդն մեծ մարգասիրութեամբ ընկալաւ Պարտիզակի Կաթողիկեայ Հայերը , որպէս նաեւ Էջմիածնական Հայոց մեծամեծները եւ Բողոքականաց Պատուելին :

Կէս օրուան ճաշին հրաւիրեալ էր քաղաքապետ Մեծ Մկրտիչ Էֆէնտի : Նոյն շաբաթ օր երեկոյեան ժամ 1 1/2ին սկսաւ երեկոյեան հսկումն եւ ժամերգութիւնն , որու մերկայ էին Արհի. Փոխանորդն եւ միւս այլ եկեղեցականք , եւ խոռոն բաղմութիւն ժողովրդեան : -- Կիւրակէ առաւօտ ժամ 11ին սկսաւ գիշերային ժամերգութիւնն եւ ասպա առաւօտեանն . որոց աւարտելէ յետոյ թափօրիւ դարձանք ի վանատունն , ուստի դարձեալ թափօրիւ իջանք յեկեղեցին ժամ 2ին : Հանդիսիս ներկայ եկեղեցականք էին հետեւեալքն :

- Արհիապ, Տէր Կարապետ Վ. Ասլանեան Արտեպ. Հերապօլայ , Կաթողիկոսական Պարբերական Փոխանորդ :
- Գերյարգելի Տէր Սահակ Հանեան Ծայրագոյն Վարդապետ , Պարբերական Դեմոստրատ :
- Գերապատիւ Հայր Օգոստինոս Վարդ. Գոյուրմանեան , Մեծասր Միխայրեանց Վեներաբլէ Կ. Պօլէս :
- Գերյարգելի Հայր Նիկողայոս Արգեր Ծ. Վարդ. Մեծասր Միխայրեանց Վեներաբլէ Կ. Պօլէս :
- Գերապատիւ Ներսէս Մ. Վարդ. Աճառեան , Կաթողիկոսական Բարբոսաշար և Արարողապետ :
- Յարգոյապատիւ Հայր Դանիթ Վարդ. Նագարեքեան ,

Յարգոյալ. Հայր Ներսէս վ. Ճնտոյեան, Ժողովրդապետ Պար-

- » » Յուսիկ վ. Մեհրապեան .
- » » Արիստակէս վ. Խապանտիլեան .
- » » Սերովբէ վ. Ապտուրյանեան, Ժողովրդապետ Սամալիոյ :
- » » Վրթանէս վ. Պայեան, Ժողովրդապետ Նիկոիոյ :
- » » Բարսեղ վ. Սարգիսեան .
- » » Դանիէլ վ. Ստեփանեան .
- » » Անանիա վ. Ղուկասիսեան .
- » » Աւետիք վ. Գագեղեան, Հոգաբարձ Պարտիզանի :
- » Տէր Մատաթիա վ. Պետրոսեան .

Գերապայծառ. Յովսէփ սարկաւազ Միւրիկեցիեան, Կաթողիկոսական Հոգաբարձ :

Գերապայծառ. Մկրտիչ Կիսա-Սարկաւազ Այեմշանեան, Կաթողիկոսական Բարդուղիմէոս :

Գրեթէ երեսուէն մանուկ գպիրք իւրեանց պատուական եւ անխոնջ Ձայնապետէն ժամերգութեանց եւ ճայնաւոր Պատարագի երգերը քաջ ուսած էին : Ուստի նախ եկեղեցւոյ մէջ Սաղմոս, Գիրք եւ Աւետարան կարդալէ յետոյ, թափօրն դուրս ելաւ եկեղեցւոյ Աւագ դռնէն, եւ դուռն փակեցաւ : Անդ նախ յատուկ սեղանի վերայ պատրաստեալ Սեղանոյ սպասք օրհնեցան, եւ ներկայ շուրջառակիր քահանայից բաժնուեցան . ապա Դռնբացէքն կատարեցաւ, եւ թափօրն ներս մտաւ : Արհիպատիւ Փոխանորդն զգետաւորելէ յետոյ, զի մինչև զայս վայր ըստ արարողութեան փիլոնով էր, սկսաւ Օծման հանդէսը ըստ արարողութեան . նախ Աւագ սեղանը օծեց, յետոյ նոյնին ետեւ որմին վերայ հաստատեալ խաչը, յետոյ ընծայարանին եւ բուրվանոցին խաչերը, եւ Աւագ սեղանը անուանեց ՍԵՂԱՆ ԾՆՆԴԵԱՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ : Նոյնպէս միւս սեղանները օծեց, որոց միոյն անուն դրաւ Ս. ԽԱՉ, եւ միւսոյն Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ : Յետոյ օծեց Մկրտարանը, միւս խաչերը, եկեղեցւոյ զուները, եւ եկեղեցւոյ մէջտեղ անդաստան ընելով անուանեց զեկեղեցին «ԵԿԵՂԵՑԻ ԾՆՆԴԵԱՆ ՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ» : Ապա սեղանները զարդարեց, կանթեղները եւ

Չահերը վառեց , վարագոյրները գոցեց եւ բացաւ , զանգալները հնչեցուց , եւ օրհնեալ ջրոց ամաններուն մէջ օրհնեալ ջուր լեցուց : Օծման արարողութեան աւարտելէ յետոյ Արհիապատիւ Փոխանորդն բուրլառ ի յաջն եւ խաչ եւ մոմ ի ձախն խնկարկելով թափօրիւ Աւագ դռնէն դուրս ելաւ , եւ «Ա. Կր. Կր. Կր.» եւ ի Գ. Վ. «Կր. Կր. Կր.» աղօթքները զրուցելով եւ խնկարկելով վարձեալ ներս մտաւ , եւ յետ այլ աղօթից , սկսաւ հանդիսաւոր Չայնաւոր Պատարազը : Բերայէ , Սամաթիայէ եւ Նիկոմիդիայէ յատկապէս եկած ականաւոր անձինք , նոյնպէս Պարտիզակի Քաղաքապետ Մկրտիչ էֆէնտին եւ այլ պատուաւոր Պարտիզակցիք , Անարատ Յղութեան կարգին Քոյրերն իրենց աշակերտներով եւ անթիւ եւ անհամար բազմութիւն ներկայ էին չքեղ եւ փառաւոր հանդիսն : Սամաթիոյ Կաթողիկեայ ժողովուրդն իրեն թաղականաց միջոցաւ թաւշեայ արծաթապատ վարչամական հանդերձ , գեղեցիկ Աւետարան մի ընծայած էին նորակառոյց Եկեղեցւոյս . եւ որք ոչ միայն այդ Աւետարանը ընծայեցին , այլ եւ իւրեանց աշխատութիւնը եւ գեղեցիկ ձայնը . զի անոնցմէ երկուք թէ՛ Չայնաւոր Պատարազի եւ թէ՛ երեկոյեան ժամերգութեան ժամանակ շապիկ հագնելով , իրենց քազցր ձայնից գեղգեղներով զԱստուած փառաբանեցին , եւ Հանդիսիս առաւել մեծ փայլ եւ չքեղութիւն պատճառեցին : Ծաշակման ժամանակ Անարատ Յղութեան կարգին վարժարանին աշակերտուհիք սպիտակազգեստք հաղորդեցան , որպէս նաեւ այլ հաւատացեալք : Չայնաւոր Պատարազն աւարտելէ յետոյ , թափօրիւ եւ երգով ելանք ի վանատուն , եւ «Ա. Կր. Կր. Կր.» շարականով եւ ծննդայներով օրհնեցինք զվանատունն . եւ այսպէս աւարտեցաւ այս փառաւոր , չքեղ եւ սրտաշարժ արարողութիւնն , որոյ նմանը չեմ կարծեր թէ Պարտիզակ տեսած ըլլայ երբէք , եւ որոյ յիշատակն յաւիտեանս անջնջելի պիտի մնայ Պարտիզակցոյ մտքին մէջ :

Փոքր ինչ կաղզուրուելէ յետոյ , Յարգ. Տէր Ներսէս Մ. Վարդ. Աճէմեան Թրքերէն համառօտ այլ ազդու ճառ մի խօսեցաւ , զոր ներկայք յոտին կացեալ մտիկ ըրին , եւ յորում ՕԳՈՍՍԱՓԱՌ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ ՀԱՄԻՏ Բ. ԿԱՅՄԵՆԻ Կենաց եւ բարօրութեան համար բարեմաղթութիւններ ըրաւ , եւ վարժարանին աշակերտք եւ այլ ներկայք «ամեն»ներով ընկալան : Յետ այսորիկ նոյն աշակերտք երգեր երգեցին եւ ճառեր խօսեցան բարիս մաղթելով եւ շնորհակալութիւն յայտնելով

Արքազան Քահանայապետին մերում Ղեւոնի համար , Օգոստա-
փառ Սուլթանին , Վեհափառ Կաթողիկոսին , Արշիպապառիւ
Փոխանորդին , Արշիպապառիւ Արքեպիսկոպոս Աբբահօր Մխի-
թարեան Մխարանութեան Վեհետկոյ , Յարդոյապ . Հօր Ներ-
սիսի վարդապետի ճնտոյեան , ժողովրդապետի Պարտիզակի :

Սեղանն պատրաստ էր , եւ երեսուն անձինք բազմե-
ցան , յորում նախ Արշիպապ . Փոխանորդն Արքազան Քահանա-
յապետին եւ Վեհափառ Սուլթանին կենաց եւ բարօրութեան
համար բարեմաղթութիւններ ըրաւ : Գերապ . Հայր Օգոստինոս
Վարդ . Գույումճեան զրուատելով Վեհափառ Կաթողիկոսին
ձեռքերը , եւ շնորհակալութիւն յայտնելով եւ յաջողութիւն
մաղթելով բաժակ առաջարկեց : Յետ որոյ Գերչարգելի Տէր Սա-
հակ Հաճեան Մ . վարդապետն Արշիպապ . Աբբահօր կենաց , եւ
Մխիթարեան Մխարանութեան յաջողութեան եւ եւս քան զեւս
զարգացման համար բարեմաղթութիւնների ըրաւ : Դարձեալ
շնորհակալութիւններ եւ բարեմաղթութիւններ եղան Յարդոյապ .
Հօր Ներսիսի ճնտոյեան , Պարտիզակի ժիր եւ անխոնջ ժողո-
վրդապետի , որ սրտաշարժ խօսքերով իւր շնորհակալութիւնը
յայտնեց : Այսպէս եւ այլ բարեմաղթութիւնք եղան : Երեկոյին
փառաւոր ժամերգութիւն մի կատարուեցաւ անդաստանաւ ,
յետ որոյ Արշի Փոխանորդն Օրիորդաց վարժարանին այցելու-
թիւն ըրաւ , ուր օրիորդք երգերով եւ ճառերով իրենց խնդու-
թիւնը եւ շնորհակալութիւնը յայտնեցին : Առ այժմ աշակեր-
տունեաց թիւն է վաթսուն , եւ վարժունք են երեք Քորք
կարգի Անարատ Յղութեան , եւ մեծ աշխուժով նոցա կրթու-
թեան եւ դաստիարակութեան կը պարապին Մանչ սղայոց վար-
ժարանին աշակերտաց թիւն է եօթանասուն , որոյ կրթու-
թեան եւ դաստիարակութեան կը պարապին Մեծարոյ Մխիթար-
եան Հարք Վեհետկոյ : Առանձին զովութեան արժանի են այդ
կրօնասէր եւ պարկեշտ աշակերտք՝ որք Աստուածային պաշ-
տամանց ժամանակ ո՛չ թէ այլսց ցրուումն մտաց եւ դայթակ-
ղութիւն , այլ բարի օրինակ են . իրենց տրուած պաշտօնը պար-
կեշտութեամբ եւ լուութեամբ կը կատարեն , երգերը ի մխասին
եւ սիրով կ'երգեն , տունց կապ եւ կոխ յարուցանելու , որ-
պէս այլուր : Ընթրիքէն յետոյ գեղեցիկ հրաւառութիւնք կա-
տարեցան հանդէպ Եկեղեցւոյ , զոր Պարտիզակի ժողովուրդն
երբէք չէր տեսած : Արշիպապ . Փոխանորդն նոյն կիւրակէ երեկոյ
քաղաքապետ Մեծ . Մկրտիչ էֆէնտիի տունն այցելութեան զը-

նայ , եւ ի դարձին ի Վանատունն Պարտիզակի Գեօրջին , Դատաւորին , Քաղաքապետութեան խորհրդոյ Անդամոց , եւ Էլմբաճնական ակամուոր անձանց այցելութիւնը ընկալաւ , եւ երկրորդ առաւօս փոխադարձ այցելութիւն տուաւ , եւ նոցա ընկերակցութեամբ աշտանակեալ ի ձի դէպ ի ծովեցր ճամբայ ելաւ , մինչ եկեղեցւոյ զանդակներն նորա մեկնիլը կը ծանուցանէին ժողովրդեան Պարտիզակի , եւ բաղմախու եկեղեցականք եւ հրացանակիր ոստիկանք յառաջոյ կ'ընթանային :

Քաղաքապետ Մեծ. Մկրտիչ Էֆէնտին մինչեւ ի Նիկոմիդիա ընկերակցեցաւ Արհրապ. Փոխանորդին , եւ որպէս ամեն առթի մէջ , այսպէս եւ յայսմ նուազի իւր ազնիւ ընաւորութեան եւ հիւրամեծար սիրոյ ասրացոյցերը երեւցուց : Մեծ գովեստից արժանի է եւս Մութասարըֆ բաշայն , որ ի պահպանութիւն անձին Արճ. Փոխանորդին վեց հրացանակիր ոստիկան կարգեալ էր , ջորչափ նա Պարտիզակ մնայր: Առանձին գովեստից եւ շնորհակալութեան արդարեւ արժանի են Յարդոյապ. Հայր Ներսէս Վարդ. Ծնոտյեան , ժողովրդապետ Պարտիզակի , իւր օգնականն Յարդոյ. Հ. Աւետիք Դադէղեան եւ Տնտեսն Հ. Անանիա Վարդ. Դոնտախնեան , որք եկեղեցւոյ շինութեան զարդարելու եւ հրաւիրեալքը ընդունելու եւ մեծարելու մասին ոչ ջանից եւ ոչ աշխատանայ խնայեցին : Նոյնպէս գովեստից եւ շնորհակալութեան արժանի է Վերապ. Հայր Յուսիկ Վարդ. Մէհրապեանն , որ այս հանդիսին ամեն կարեւոր եղածները ի Կ. Պօլիս հայթայթելով առաքէց ի Պարտիզակ , եւ ամենուն գոհութեան արդարապէս արժանացաւ :

Նորակառոյց եկեղեցւոյ տրուած ընծայից ջուցակը քովս չ'ունիմ , բայց որչափ ինչ կը յիշեմ , աստ կը գրեմ :

Վսեմաշուք Կարդինալ Սիմէօնի, Գահերէց Ս. Ժ. Տ. Հ. վեց պղնձեայ ոսկեղօծ մեծ աշտանակներ եւ խաչ :

Վեհախառ Կաթողիկոս պատուանդանով մեծ եւ ոսկեղօծ խաչ , եւ բանտած բարձ մի :

Կարգ Կուսանաց Անարատ Յղութեան՝ մի զոյգ կեղծ ծաղիկ շուշան :

Հայ Կաթողիկեայ ժողովուրդ Սամաթիոյ՝ արձաթապատ Աւետարան վարչամակով :

Գերապայծառ Մկրտիչ Կիսա-սարխաւազ Ալէմչանեան՝ բաժկամանք սնակաւ :

Տիկնայք Պարտիզակի՝ եկեղեցւոյ վարապոյրները :

Գեղեցիկ պատկեր մի , զոր չեմ յիշեր ընծայողը եւ Սե-
ղանի ծածկոյթ :

Գարձեալ բարձ մի ատեղնէզործեալ ի Հէքիմնան բնտաննաց :
Պարտիզակի վարժարանի աշակերտք գեղեցիկ բուրլառ եւ
խնկաման մի . եւն . եւն :


Սրբոյն Ղազարու պատկառելի ծերունին , այսինքն Գերա-
պատիւ Հայր Ղեւոնդ Ալիշան Աթոռակալ վարդապետն եւս
ընծայ մի , այսինքն երեք ընծայ նուիրած էր Եկեղեցւոյս , եւ
թէպէտ ինքն նոյն օրն հարիւրաւոր մղճնկերով հետի էր ի Պար-
տիզակէ , սակայն իւր ընծայք ոչ միայն կային՝ այլ եւ խօսէին ,
երբ Եկեղեցւոյ երեք զանգակներն քաղցրաձայն կը հնչէին :
Այդ երկը զանդակաց անուններն են Ռաֆայէլ , Գաբրիէլ եւ Մի-
քայէլ , եւ որոց ձուլուած ժամանակ հայատառ զրերով արձա-
նագրեալ են հետեւեալ սողք , գրեալք յանմահական զրջէն
Հօր Ղեւոնդեայ վարդապետի , եւ են .

Հնչեա յանուն փեսայածուին Ռափայէլ ,
Յընծայ յերկրի եւ զոյգ յերկինքս հայէլ :

Յիտայիս ճուրեղ հընչիմ ի Պարտիզակ ,
Ես Գաբրիէլ ծննդեան կենաց հրբձուից հրեշտակ :

Միքայէլիս հընչման լըսող , ո՛վ Պարտիզակ ,
Անմահութեան զիս քան մահու ծանիր կոչեակ :

Ն . Վ . Մ . Ա .



ՊԱՏԿԵՐ տառն և. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է:
Կ. Պոլսոյ համար 40 դանեկան
Գաւառաց և. օտար երկիրներու. համար
ըղբատարի ծախքն ի միասին հաշուելով . 50 « «

Խորագրանշիշը թիւ 2 դանեկան

ՊԱՏԿԵՐԻ խմբագրատունն է ի Բերսա, Եւշիլի փողոց,
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան և. թերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրաց համար:

RÉDACTION DU BADGUERE

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتمشدر